Սոլոմոն *գեղերից*, Փարուլ *առուակը համանուն գեղերից*, Սոսան *առ–ը համանուն գեղից եւ* Փագլի–գոմը *նոյն Կչլայից (ժմեռոց)*։

Փենեքը մի մեծ արօտատեղի է, որի լեռնալանջերի, մարգերի եւ ճահիճների խոտը այնքան առատ է, այնքան բարեբեր է այս սարահարթը, որ Պարթեւների հիւսիսային Բանակի բոլոր պահանջները եւ բիւրաւոր այրուձին կարող էր իր կարիքները լիովին գտնել այս վիճակում։ Փենեք անունը ցոյց է տալիս, որ դարերով Պարթեւական Բանակը զետեղուած է եղել այստեղ։ Զորս ընդարձակ Փագեր ունի (աւեբակների)· այս Փագերի մօտ մինչեւ օրս կանգնած է փառահեղ Ս. Միքայէլ հրեշտակապետի տաճարը, որ ինչպէս երեւում է,

---

կապպ առ–ի վրայ։ Բայց սա արդէն արտասանութիւնը, առոգանութիւնը ուղղակի Պարթեւական. Պարթեւան (Պարթեւ–վան) որ գտնում է Պանջուրիա (Բանջուրա) վտակի ափին. իր գիրքով. հնութիւններով, տաճարի, ապարանքի կործանուածներով ցոյց է տալիս, որ Պարթեւական արքունի կամ ոստանիկ մի ընտանիքի ոստանն է ներկայացնում։ Սա՛ից ոչ շատ հեռու Փանագկերտների վ. եւ Ն. մօտ կայ մի Պարթանոց եւս. բացի Պարխալ եւ Խամխալ վտակների ձորերում եղած պարթեւական կալուածներից եւ Մառադիտի մօտ եղած վ. եւ Ն. Բերչեւան–Պարթեւան՝ ից. որոնք բոլոր էլ ապացուցանում են, որ Պարթեւները ունեցել են Ուղթիքի գաւառում 7 բերդ, Բաշլըւան վտակի մօտ՝ երկու բերդ. բացի իրե՛ց սեփական Պ լխար-Բաշլի-Բաշլիբար գաւառի կալուածներից։ Ս. բեմն Ս. ղթ կ. Պալխար, Խալխար. Պահլեւան գաւառներում կալուածներ են ունեցել Պարթեւները. իրենց բերդերը ամրոցները եւ կանանոցները։